

ԿՐՕՆԱԿԱՆ

ՃԻՊՐԱՆ ԽԱԼԻԼ ՃԻՊՐԱՆ
Անգլերէնից թարգմանեց Ն.Ա.Մ.

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ

Քրիստոնեաներ Նազովրեցի Յիսուսին կը նային ծնած իբր աղքատ, ապրած՝ խեղճ, անարգուած՝ որպէս անոք և խաչուած՝ իբր ոճրագործ, և կու լայ, կը սգայ ու կ'ողբայ, և միայն այս է որ ան կ'ընէ կարծելով թէ զինք այսպէսով կը պատուէ:

Եւ 19 դարերէ ի վեր Յիսուսի անձին ընդմէջէն մարդկութիւնը կը պաշտէ Անոր «թուլամորթութիւնը», մինչդեռ Յիսուս հզօր էր բառին իսկական առումով, սակայն մարդիկ չէին ըմբռներ իմաստը իրաւ ոյժին, որովհետեւ Քրիստոս չապրեցաւ խեղճ ու վախով, և չմեռաւ զանգատով ու ցաւով, այլ ապրեցաւ իբր ըմբոստ և խաչուեցաւ իբր այդ ու մեռաւ իբրեւ հսկայ: Յիսուս թեւատ թռչուն մը չէր, այլ հուժկու փոթորիկ մը, որ իր սլացքին մէջ կը փշրէր շինծու թեւերը մարդկութեան: Ան չեկաւ կապոյտ հորիզոնին ետեւէն մարդուն ցաւը վերածելու կեանքի խորհրդանշանի մը, այլ վերածելու կեանքը՝ իրաւունքի և ազատութեան:

Քրիստոս երբեք չսարսափեցաւ իր հակառակորդներէն, զինք հարուածողներէն, և զինք սպաննողներուն երբեք ցաւի արտայայտութիւն ցոյց չտուաւ, ու մանաւանդ՝ Ան չիջաւ իր լոյսի բնակարանէն քանդելու տուններ և անոնց քարերէն կառուցելու վանքեր կամ ճգնարաններ, տպաւորելու խստապահանջ մարդերն ու զանոնք առաջնորդելու քահանայութեան կամ կուսակրօնութեան: Աստուածորդին չեկաւ մարդոց սորվեցնելու վիթխարի և բարձր տաճարներ կառուցելու խեղճ խրճիթներու, և ցուրտ ու մութ տուններու կողքին, այլ Ան եկաւ մարդոց սիրտերը վերածելու տաճարներու, անձերը՝ զոհասեղաններու և միտքերը՝ կուսակրօններու:

Ահա այս էր որ ըրաւ Աստուածորդին, և անոնք են սկզբունքները որոնց համար Ան բոլորովին ինքնակամ և իր ամբողջական որոշումով խաչ բարձրացաւ:

Այո՛ Տէր, գլխուդ փշեպսակը իսկապէս պատուաբեր է և աւելի գեղեցիկ քան Հնդկաստանի Պահրամ թագաւորի թագը: Ափերդ խոցած գամերը աւելի փառաւոր են՝ քան Դիոս (Jupiter) չաստուծոյն գայիսոնը, և ոտքերուդ վրայ հեղած արեան կաթիլներու փայլքը աւելի շքեղ են քան Աշտարոթ թագուհիի մանեակը:

Հետեւաբար Տէր, ներէ՛ այն թուլամորթները, որոնք կ'ողբան քեզի, որովհետեւ չեն գիտեր իրենք իրենց վրայ ողբալ, և ներէ՛ անոնց՝ որոնք չեն գիտեր թէ Դուն մահովդ յաղթեցիր մահուան, և գերեզմաններու մէջ գտնուողներուն նոր կեանք պարգեւեցիր: